Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 688 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՆՐԱՆՑ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսությունների վերականգնման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրում ընդգրկման ենթակա են՝

1) Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձը (այսուհետ՝ հող օգտագործող), որը որպես աշխատանք փնտրող հաշվառվել է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում (այսուհետ՝ գործակալություն).

2) հող օգտագործողի ընտանիքի 16-63 տարեկան գործունակ անդամները, որոնք որպես աշխատանք փնտրող հաշվառվել են գործակալությունում.

3) գործակալությունում հաշվառված աշխատանք փնտրող անձը, որը ծրագրի շրջանակներում աշխատանքային պայմանագրով՝ որպես վարձու աշխատող, կամ քաղաքացիաիրավական պայմանագրով՝ որպես որոշակի ծառայություններ մատուցող կամ

աշխատանքներ կատարող, ներգրավվում է հող օգտագործողի գյուղացիական տնտեսության վերականգնման աշխատանքներում:

3. Հող օգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե նրա՝

1) ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ.

2) ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս երեխա.

3) ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է:

4. Հող օգտագործողների վերաբերյալ տեղեկատվությունը (գյուղական համայքի անվանումը, հող օգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, տարիքը, փաստացի բնակության վայրը, ընտանիքի 16-63 տարեկան գործունակ անդամների թիվը, ընտանիքի անչափահաս երեխաների թիվը, ընտանիքի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը) գործակալության Արմավիրի մարզային, Վաղարշապատի և Բաղրամյանի տարածքային կենտրոններին (այսուհետ՝ տարածքային կենտրոն) տրամադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից ստացվելուց հետո եռօրյա ժամկետում:

5. Ծրագրի առավելագույն տևողությունը 3 ամիս է:

6. Մեկ ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 350.000 դրամը:

7. Ծրագրում ընդգրկված անձանց ստացած եկամուտը, ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ՝ որպես եկամուտ չի հաշվարկվում:

8. Ծրագիրը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջոցների հաշվին:

## II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Գործակալության պետի կողմից ծրագրի պատասխանատու նշանակված գործակալության մասնագետները (այսուհետ՝ ծրագրի պատասխանատու) սույն կարգի 4-րդ կետով սահմանված տեղեկատվությունն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան գյուղական համայնքի ղեկավարի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա, սույն կարգի 15-րդ կետում նշված գյուղա-տնտեսական աշխատանքների գծով խորհրդատուների հետ միասին՝

1) այցելում են հող օգտագործողին՝ գյուղական համայնքի ղեկավարի կամ նրա ներկայացուցչի ուղեկցությամբ.

2) հող օգտագործողին, նրա՝ ծրագրում ընդգրկման ենթակա ընտանիքի անդամներին ծրագրի վերաբերյալ մանրամասն իրազեկում և տրամադրում են խորհրդատվություն.

3) հող օգտագործողին և նրա ընտանիքի 16-63 տարեկան գործունակ անդամներին՝ այդ անձանց համաձայնությամբ հաշվառում են որպես աշխատանք փնտրող.

4) հող օգտագործողի անմիջական մասնակցությամբ՝

ա. փաստագրում են մշակման ենթակա հողատարածքի գտնվելու վայրը, չափը,

բ. գնահատում են հող օգտագործողի և նրա ընտանիքի կողմից հողի մշակման կարիքներն ու հնարավորությունները,

գ. կազմում են գյուղացիական տնտեսության վերականգնման գործարար ծրագիր (այսուհետ՝ գործարար ծրագիր)՝ երկու օրինակից (ձև N 1):

10. Գործարար ծրագրում նշվում են՝

1) գործարար ծրագրի իրականացման նպատակը.

2) կատարման ենթակա աշխատանքների պլան-ժամանակացույցը.

3) պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ աշխատողների ընդհանուր թիվը, այդ թվում՝ հող օգտագործողի ընտանիքի

անդամ չհանդիսացող վարձու աշխատողների, քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող անձանց թիվը.

4) գործարար ծրագրում ընդգրկվողների կողմից իրականացման ենթակա աշխատանքների բնույթը.

5) սույն կետի 2-րդ ենթակետում նշված պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների տեսանելի արդյունքները, որոնք պետք է լինեն կոնկրետ և չափելի:

11. Տարածքային կենտրոնի տնօրենը հող օգտագործողի հետ երկու օրինակից կնքում է գյուղացիական տնտեսության վերականգնման աջակցության պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր, ձև N 2), որի անբաժանելի մաս է դառնում գործարար ծրագիրը: Պայմանագրի օրինակներից մեկը տրվում է հող օգտագործողին, մյուսը մնում է տարածքային կենտրոնում:

12. Հող օգտագործողը (որպես գործատու) ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատողի հետ կնքում է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր՝ հիմք ընդունելով պայմանագրի, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող գործարար ծրագրի պայմանները: Հող օգտագործողն աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի պատճենները տրամադրում է ծրագրի պատասխանատուին՝ ծրագրով նախատեսված ֆինանսական աջակցությունն ստանալու համար:

13. Ծրագրի պատասխանատուն ամսական առնվազն 2 անգամ իրականացնում է գործարար ծրագրի կատարման ընթացքի մոնիթորինգ՝ ըստ աշխատանքների պլան-ժամանակացույցի, և արդյունքները ներկայացնում է տարածքային կենտրոնի տնօրենին:

14. Տարածքային կենտրոնի տնօրենի կողմից գործարար ծրագրի մոնիթորինգի իրականացման ժամանակացույցը և սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պլան-ժամանակացույցը ներկայացվում է նախարարություն և գործակալություն՝ մինչև ծրագրի մեկնարկը:

15. Տարածքային կենտրոնը, որպես գյուղատնտեսական աշխատանքների գծով խորհրդատու՝ ծրագրում ներգրավում է Արմավիրի մարզպետարանի կողմից ներկայացված համապատասխան մասնագետին (այսուհետ՝ խորհրդատու), որը մասնակցում է հետևյալ աշխատանքների կատարմանը՝

1) գործարար ծրագրի կազմում.

2) սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների և (կամ) ծառայությունների կատարողականի գնահատում:

16. Խորհրդատուն գնահատում է սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նշված պլան-ժամանակացույցով նախատեսված նախորդ ամսվա ընթացքում կատարված աշխատանքները և (կամ) մատուցված ծառայությունները և համապատասխան եզրակացությունը ներկայացնում է ծրագրի պատասխանատուին՝ մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 3-ը:

Խորհրդատուի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա ծրագրի պատասխանատուն գնահատում է պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների և (կամ) ծառայությունների կատարողականը (այսուհետ՝ կատարողական):

17. Պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝

1) կողմերի համաձայնությամբ.

2) հող օգտագործողի դիմումի համաձայն.

3) տարածքային կենտրոնի տնօրենի կողմից, եթե իրար հաջորդող մոնիթորինգի արդյունքում յուրաքանչյուր անգամ ծրագրում ընդգրկված անձն անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ բացակայել է՝ բացառությամբ այդ անձի հիվանդության կամ անձի և նրա հետ համատեղ ապրող կամ արյունակցական կապի մեջ գտնվող ընտանիքի անդամի հետ կապված դժբախտ պատահարի դեպքերի:

18. Պայմանագրի գործողության դադարեցմամբ դադարեցվում է պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների վճարումը հող օգտագործողին՝

1) պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ՝ սույն կարգի 17-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դեպքերում.

2) մոնիթորինգի արդյունքում անհարգելի պատճառով ծրագրում ներգրավված անձի առաջին բացակայության փաստագրման օրվա դրությամբ՝ սույն կարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքում:

19. Ծրագիրը կազմակերպում և իրականացնում է գործակալությունը՝ նախարարության, Արմավիրի մարզպետարանի, կարկտահարումից տուժած գյուղական համայնքների մասնակցությամբ և գործուն աջակցությամբ, իսկ ծրագրի մոնիթորինգը և գնահատումն իրականացնում են նախարարությունը և գործակալությունը:

20. Ծրագրի շրջանակներում հող օգտագործողից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող հաշվապահական հաշվառման վարումը, օրենքով սահմանված կարգով հարկերի հաշվարկումը, վճարումը, գրանցման հայտի և անձնավորված հաշվարկի ձևավորումը և հարկային մարմին ներկայացումն ապահովում է գործակալությունը:

21. Տարածքային կենտրոնի տնօրենը՝

1) գործակալության պետին ներկայացնում է առաջարկություններ՝ ըստ համայնքների ծրագրի պատասխանատուների վերաբերյալ.

2) ծրագրի իրականացման ընթացակարգերի, սահմանված ժամկետների և ֆինանսական խախտումների համար կրում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Հող օգտագործողը պայմանագիրը կնքելուց հետո եռօրյա ժամկետում բացում է բանկային հաշիվ և դրա մասին բանկի կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքը

(հող օգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, փաստացի բնակության հասցեն, բանկի համապատասխան մասնաճյուղի անվանումը, բանկային հաշվի համարը) տրամադրում է ծրագրի պատասխանատուին:

23. Ծրագրով նախատեսված աշխատանքներն սկսելուց հետո 10 օրվա ընթացքում հող օգտագործողին տրվում է կանխավճար՝ պայմանագրով նախատեսված գումարի 10 տոկոսի չափով:

24. Պայմանագրով նախատեսված գումարի 90 տոկոսը հող օգտագործողին վճարվում է նախորդ ամսվա համար՝ մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը, հիմք ընդունելով՝

1) ծրագրի մոնիթորինգի արդյունքները.

2) սույն կարգի 25-րդ կետում նշված՝ աշխատանքների հաճախումների մասին տեղեկանքը.

3) ծրագրի պատասխանատուի կողմից գնահատված կատարողականը:

25. Յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը հող օգտագործողը ծրագրի պատասխանատուին է ներկայացնում տեղեկանք տվյալ ամսվա ընթացքում իր մոտ սույն կարգի 11-րդ կետում նշված աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց աշխատանքի փաստացի հաճախումների և (կամ) քաղաքացիաիրա-վական պայմանագրով մատուցված ծառայությունների կամ կատարված աշխատանքների մասին:

26. Սույն կարգի 24-րդ կետի հիման վրա տարածքային կենտրոնը կազմում և մինչև հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը գործակալություն է ներկայացնում նախորդ ամսվա համար ծրագրում ընդգրկված հող օգտագործողներին վճարվելիք գումարների չափերի վերաբերյալ ֆինանսավորման հայտ-պահանջագիրը:

27. Գործակալությունը տարածքային կենտրոններից ստացված ֆինանսավորման հայտ-պահանջագրերի հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և

նախարարություն է ներկայացնում ըստ տարածքային կենտրոնների ամփոփված ծրագրի ֆինանսավորման հայտ-պահանջագիրը:

28. Նախարարությունը ֆինանսավորման հայտ-պահանջագիրն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում զբաղվածության պետական նպատակային ծրագրերի իրականացման համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղական գանձապետական բաժնում նախարարության աշխատակազմի անվամբ բացված գանձապետական հաշիվներին է փոխանցում ֆինանսավորման հայտ-պահանջագրով նախատեսված միջոցները:

29. Սույն կարգի 28-րդ կետում նշված գումարն ստացվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է հող օգտագործողի բանկային հաշվին՝ նախապես Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելով <<Եկամտային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված եկամտային հարկը:

## IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

30. Տարածքային կենտրոնի տնօրենը յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 15-ը հաշվետվություն է ներկայացնում գործակալության պետին ծրագրում ընդգրկված հող օգտագործողների, նրանց տրամադրված ֆինանսական միջոցների չափի վերաբերյալ:

31. Գործակալությունն ամփոփում է տարածքային կենտրոններից ստացված հաշվե-տվությունները և նախարարություն է ներկայացնում ամսական ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ձև 1

# ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի պատասխանատու
---
(անունը, ազգանունը, հայրանունը, տարածքային կենտրոնի անվանումը, պաշտոնը, հեռախոսահամարը, ստորագրությունը)

2. Գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձ
---
(անունը, ազգանունը, հայրանունը, փաստացի բնակության վայր, հեռախոսահամարը, ստորագրությունը)

---

3. Ընտանիքի 16-63 տարեկան՝ ծրագրում ընդգրկվող գործունակ անդամներ՝
---
(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, ազգակցական կապը)

---
(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, ազգակցական կապը)

---
(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, ազգակցական կապը)

4. Հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձի ընտանիքի անդամ չհանդիսացող՝
վարձու աշխատողներ՝
---
(անունը, ազգանունը, հայրանունը)

---
(անունը, ազգանունը, հայրանունը)

քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող անձինք՝
---
(անունը, ազգանունը, հայրանունը)

---
(անունը, ազգանունը, հայրանունը)

5. Լրացման օրը ----------
(ամսաթիվը)

6. Գործարար ծրագրի իրականացման նպատակը

7. Մշակման ենթակա հողատարածքի գտնվելու վայրը, չափերը, հողի մշակման կարիքներն ու հնարավորությունները՝

8. Ծրագրի իրականացման ժամանակացույց՝

Աշխատանքի սկիզբը՝_____, ավարտը՝_____

9. Աշխատանքների իրականացման ծավալը (մարդ-օր) _____

10. Ֆինանսական միջոցների չափը _____

այդ թվում՝ հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձին վճարվող՝ _____ դրամ,

ընտանիքի անդամներին վճարվող՝ _____ դրամ,

վարձու աշխատողներին վճարվող՝ _____ դրամ,

ծառայություններ մատուցող անձանց վճարվող ՝ _____ դրամ,

որից՝ եկամտային հարկ՝ _____ դրամ:

11. Իրականացվող ներդրումներ ՝

այդ թվում՝ հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձի կողմից (աշխատանքի միջոց)

_____

այլ կազմակերպությունների կողմից (ֆինանսական միջոցներ, աշխատանքի միջոց)՝

_____

12. Ակնկալվող արդյունքները՝

13. Ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13 -ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղա-տնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսությունների վերականգնման ծրագրի իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական նախարարությանը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին գումար հատկացնելու մասին >> N 688 -Ն որոշմանը:

14. Լրացուցիչ տեղեկություններ

Ծանոթություն. Ծրագիրը ներկայացվում է երկու օրինակից, թելակարված, պաշտպանիչ թերթիկի վրա ստորագրված, կնքված և էջանշված:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Աշխատանքների ծավալը, աշխատանքների սկիզբը՝ _____, աշխատանքների ավարտը՝ _____

| N N ը/կ | Աշխատանքների նկարագիրը | Չափման միավորը | Ծավալը | Աշխատանքային օրերը | Աշխա-տողների թիվը | Աշխ-օր | Աշխատանքի սկիզբը | Աշխատանքի ավարտը | Նշում-ներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | Չնախատեսված աշխատանքներ | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | |

Ծրագրի պատասխանատու_____

Ստորագրությունը _____

Ամսաթիվը _____

Կ.Տ.

Գյուղատնտեսական աշխատանքների գծով խորհրդատու _____

(ստորագրությունը)

13_0688

Ձև 2

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ) ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

քաղ. _____ ___ _____ 2013 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային (մարզային) կենտրոնը (այսուհետ՝ տարածքային կենտրոն)

_____

(տարածքային կենտրոնի անվանումը)

ի դեմս տնօրեն _____-ի,

(ազգանունը, անունը, հայրանունը)

մի կողմից, Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձը ----------

(ազգանունը, անունը, հայրանունը)

մյուս կողմից (այսուհետ՝ կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան՝ Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձի (այսուհետ՝ հող օգտագործող) գյուղացիական տնտեսության վերականգնման աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունների կարգավորումն է:

## II. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Հող օգտագործողն իրավունք ունի՝

2.1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսության վերականգնման ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ ստանալու կանխավճար՝ նախատեսված գումարի 5 տոկոսի չափով.

2.2. ծրագրով աշխատող անձանց մասին տարածքային կենտրոն տեղեկանք ներկայացնելուց հետո դիմելու տարածքային կենտրոնի տնօրենին՝ իր բանկային հաշվի համարին ծրագրով աշխատող անձանց աշխատավարձի փոխհատուցման համար ֆինանսական միջոցներ փոխանցելու պահանջով:

3. Հող օգտագործողը պարտավոր է՝

3.1. ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատողի հետ կնքել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր և պատճենը ներկայացնել տարածքային կենտրոն.

3.2. յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկանք տվյալ ամսվա ընթացքում իր մոտ սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց աշխատանքի հաճախումների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրով մատուցված ծառայությունների կամ կատարված աշխատանքների մասին:

4. Տարածքային կենտրոնի տնօրենն իրավունք ունի հող օգտագործողի կողմից սույն պայմանագրում նշված պարտավորությունների չկատարման դեպքում լուծելու սույն պայմանա-

գիրը և դադարեցնելու ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների վճարումը հող օգտագործողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Տարածքային կենտրոնի տնօրենը պարտավոր է ապահովել հող օգտագործողի բանկային հաշվին ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների փոխանցումը:

## III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Կողմերի միջև հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից և գտնվում է կողմերի մոտ:

8. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

Հող օգտագործող _____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

ԿՎՎ _____
սպասարկող բանկ՝_____
հ/հ _____

Կ. Տ.

Տնօրեն_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

Կ. Տ.

____ _____ 2013թ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 688 - Ն որոշման

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | | | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | | ինն ամիս | տարի |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ** | 0.00 | 0.00 |
| | | | այդ թվում՝ | | |
| 10 | | | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | 05 | | **Գործազրկություն** | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | | 01 | **Գործազրկություն** | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | | | **05. Գործազրկության նպաստ** | (175000.00) | (175000.00) |
| | | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | | | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | | | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |
| | | | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) | (175000.00) | (175000.00) |
| | | | այդ թվում՝ | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | -Գործազրկության նպաստներ բյուջեից | (175000.00) | (175000.00) |
| 11 | | | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | 175000.00 | 175000.00 |
| | | | **այդ թվում՝** | | |
| | 01 | | **ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ** | 175000.00 | 175000.00 |
| | | | այդ թվում՝ | | |
| | | 01 | **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ** | 175000.00 | 175000.00 |
| | | | այդ թվում՝ | | |
| | | | **01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ** | 175000.00 | 175000.00 |
| | | | ՀՀ կառավարություն | 175000.00 | 175000.00 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13 -ի N 688 -Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն
ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.19 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

| Չափորոշիչները | | | Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծում) | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | | ֆինանսական ցուցանիշներ | |
| | | | ինն ամիս | տարի | ինն ամիս | տարի |
| **ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները** | | | | | | |
| **1. Քաղաքականության միջոցառումները** | | | | | | |
| **1.2. Տրանսֆերտներ** | | | | | | |
| **Ծրագրի դասիչը** | | Տրանսֆերտի անվանումը<br>Գործազրկության նպաստ | | | | |
| 1088 | ԾՏ01 | Նկարագրությունը<br>Գործազրկության նպաստի տրամադրում գործազուրկի կարգավիճակ ունեցող քաղաքացիներին | | | | |
| Շահառուների քանակը | | Նպաստառու գործազուրկների թիվը | (810) | (810) | X | X |
| Գումարը (հազ. դրամ) | | | X | X | (175,000.0) | (175,000.0) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տրանսֆերտի վճարման հաճախականությունը | | | ամիսը մեկ անգամ | | |

Շահառուների ընտրության չափանիշները
Գործազուրկի կարգավիճակ և առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունենալը

*Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը*
1088- Զբաղվածության ծրագիր

*Վերջնական արդյունքի նկարագրությունը*
Գործազրկության մակարդակի նվազեցում

**ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի ամիջական գործունեության արդյունքները**
**1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները**

| **Ծրագրային դասիչը** | | Անվանումը<br>ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | |
|---|---|---|---|---|---|
| 1088 | ԾՏ21 | Նկարագրությունը<br>Հ Հ Արմավիրի մարզի կարկտահարության հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունների վերականգնման աջակցության իրականացում | | | |
| Քանակական | | Ծրագրում ընդգրկման ենթակա ընտանիքի թիվը 500 | 500 | X | X |
| Քանակական | | Ծրագրի ուղեկցման ծախսեր 1 | 1 | X | X |
| Որակական | | Մշակված չէ | | X | X |
| Ժամկետայնության | | Մշակված չէ | | X | X |
| Գումարը (հազ. դրամ) | | | | 174,125.0 | 174,125.0 |
| Դրամական աջակցություն վճարման հաճախականությունը | | համաձայն կնքած պայմանագրի | | | |

| | |
|---|---|
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը | |
| 1088- Զբաղվածության ծրագիր | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը | |
| Նախատեսվում է վերականգնել կարկտահարության հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունները | |

Աղյուսակ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ
N 11.51 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Արմավիրի մարզպետարան

| Չափորոշիչները | | | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | | ֆինանսական ցուցանիշներ | |
| | | | ինն ամիս | տարի | ինն ամիս | տարի |
| **ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի ամիջական գործունեության արդյունքները** | | | | | | |
| **1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները** | | | | | | |
| **Ծրագրային դասիչը** | | Անվանումը<br>ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | | |
| 1002 | ԾՏ75 | Նկարագրությունը<br>Հ Հ Արմավիրի մարզի կարկտահարության հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունների վերականգնման աջակցության իրականացում | | | | |
| Քանակական | | Հ Հ Արմավիրի մարզի կարկտահարության հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունների վերականգնման աջակցության իրականացում ծրագրի ուղեկցման ծախսեր 1 | 1 | | X | X |
| Որակական | | Մշակված չէ | | | X | X |
| Ժամկետայնության | | Մշակված չէ | | | X | X |
| Գումարը (հազ. դրամ) | | | | | 875.0 | 875.0 |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը | | | | | | |
| 1088- Ջրաղվածության ծրագիր | | | | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը | | | | | | |
| Նախատեսվում է վերականգնել կարկտահարության հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունները | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

13_0688

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 688 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Անվանումը | Գնման ձևը | Չափման միավորը | Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում) | |
|---|---|---|---|---|
| | | | քանակը | գումարը (հազ. դրամ) |
| **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | | | | 1,050.0 |
| **01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ** | | | | 1,050.0 |
| **ԱՊՐԱՆՔՆԵՐ** | | | | 1,050.0 |
| Տրանսպորտային նյութեր (բենզին ռեգուլյար) | ՇՀ | լիտր | 2324 | 1,050.0 |
| ՀՀ Արմավիրի մարզպետարան | | | | 350.0 |
| **01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ** | | | | 350.0 |
| **ԱՊՐԱՆՔՆԵՐ** | | | | 350.0 |
| Տրանսպորտային նյութեր (բենզին ռեգուլյար) | ՇՀ | լիտր | 774.7 | 350.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ